

ԱՐՑԱԽՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ և ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Ծրագրի նպատակն է խթանել Արցախի Հանրապետության բնակչության սոցիալ-տնտեսական հզորացումը և կայուն տնտեսական զարգացումը՝ կրթական, խորհրդատվական և դրամաշնորհային բաղադրիչների միջոցով: Ծրագրի շնորհիվ տարբեր կրթություն և հմտություն ունեցող արցախցիներ հնարավորություն կունենան ընդլայնել սեփական զբաղվածությունն ապահովելու և աշխատանք գտնելու հնարավորությունները: Ծրագիրը նաև նպատակ ունի զարգացնելու պետական ծառայողների մասնագիտական հմտությունները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ), 55 Արևելք, 59-րդ փող. Նյու Յորք, NY 10022-1112:
4.	Ծրագիրը կատարողը	Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) Հայաստանի ներկայացուցչություն (ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40, ՀՎՀՀ 00006479):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Արցախի Հանրապետություն, քաղ. Ստեփանակերտ, կրթական:
6.	Ծրագրի բյուջեն	55 486 880 դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	Արցախի Հանրապետության բնակչություն:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թ. սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ	1. Հայաստանի ամերիկյան համալսարանին (ՀՎՀՀ 01511187) պատվիրել ներքոգրյալ ծառայությունները, այդ թվում առցանց, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 43 286 880 (քառասուններեք միլիոն

ֆինանսական միջոցների ծավալը	երկու հարյուր ութսունվեց հազար ութ հարյուր ութսուն) դրամ՝ առանց ԱԱՀ, որի համար ակնկալվում է հարկային արտոնություն: - Նպաստելու համար անգլերեն լեզվի որակյալ արտադասարանական դասընթացների հասանելիության տարածմանը Արցախի Հանրապետությունում՝ կազմակերպել, այդ թվում առցանց, անվճար, առնվազն 5 մակարդակով անգլերեն լեզվի դասընթացներ 16 տարին լրացած Արցախի Հանրապետության այն քաղաքացիների համար, ովքեր կցանկանան խորացնել իրենց անգլերեն լեզվի գիտելիքները Հայաստանի ամերիկյան համալսարանի «Շարունակական Կրթություն» ծրագրով: Հաշվի առնելով դասընթացների պահանջարկի գնահատումը, նախատեսվում է մինչև ծրագրի ավարտը ունենալ 40 խումբ: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 30 434 040 (երեսուն միլիոն չորս հարյուր երեսունչորս հազար քառասուն) դրամ՝ առանց ԱԱՀ: - Աջակցել Արցախի Հանրապետության ողջ տարածքից գործարար գաղափարներ ունեցող անձանց՝ ձեռք բերելու անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ՝ կյանքի կոչելու իրենց գաղափարները: Բաց մրցույթի արդյունքում տարբեր համայնքներից և Ստեփանակերտից ընտրված 25 մասնակիցներ, ովքեր կներկայացնեն կենսունակ բիզնես գաղափարներ, հնարավորություն կունենան մասնակցելու հատուկ մշակված «Ձեռնարկատիրություն» թեմայով անվճար դասընթացին: Դասընթացները անցկացվելու են 2 խմբով՝ 60 դասաժամ տևողությամբ: Առավել հաջողված 6 բիզնես գաղափարներ կստանան ֆինանսական աջակցություն՝ դրամաշնորհի/սվիրատվության տեսքով: Դասընթացների ընդհանուր բյուջեն կազմում է 4 269 720 (չորս միլիոն երկու հարյուր վաթսուհինը հազար յոթ հարյուր քսան) դրամ՝ առանց ԱԱՀ: - Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի համար արդեն իսկ ձեռք բերված պայմանավորվածության շրջանակներում համակարգչային գրագիտության դասընթացներ, որոնք նախատեսված են մինչև 40 աշխատակիցների համար՝ 24 դասաժամ տևողությամբ, 2 խմբով, որի ընդհանուր արժեքը կազմում է 2 353 260 (երկու միլիոն երեք հարյուր հիսուներեք հազար երկու հարյուր վաթսուն) դրամ՝ առանց ԱԱՀ:
------------------------------------	---

		Ճկուն հմտությունների դասընթացը նախատեսված է մինչև 40 աշխատակիցների համար՝ 30 դասաժամ տևողությամբ, 2 խմբով, որի ընդհանուր արժեքը կազմում է 2 721 810 (երկու միլիոն յոթ հարյուր քսանմեկ հազար ութ հարյուր տաս) դրամ՝ առանց ԱԱՀ: - Արցախի Հանրապետության կառավարության աշխատակիցների համար կառավարման հմտության դասընթացներ՝ 36 դասաժամ տևողությամբ, 2 խմբով, որի արժեքը ընդհանուր կազմում է 3 508 050 (երեք միլիոն հինգ հարյուր ութ հազար հիսուն) դրամ՝ առանց ԱԱՀ: 2. Մասնագետ խորհրդատուների /հարկային, իրավական/ վարձավճար՝ 5,000,000 դրամ, որի համար չի ակնկալվում հարկային արտոնություն: Խորհրդատվությունը տրամադրվելու է հյուրընկալության կառավարման և «Ձեռնարկատիրություն» թեմայով դասընթացների ավարտից հետո: 3. Դրամաշնորհների (նվիրատվության) տրամադրում՝ 7,200,000 դրամ «Ձեռնարկատիրություն» թեմայով դասընթացների ավարտից հետո, որի համար չի ակնկալվում հարկային արտոնություն:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Հայաստանի ամերիկյան համալսարանին պատվիրել ներքոգրյալ ծառայությունները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 43 286 880 դրամ, որոնք մատուցվելու են Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում. - Անգլերեն լեզվի դասընթացների կազմակերպում և անցկացում առնվազն 5 մակարդակում՝ 40 խմբի համար, յուրաքանչյուր խմբում՝ 10-12 մասնակից: - Ձեռնարկատիրություն թեմայով 2 դասընթացների կազմակերպում և անցկացում, - ԱՀ Աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի համար համակարգչային գրագիտության 2 դասընթացների կազմակերպում և անցկացում, - ԱՀ Աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարության աշխատակազմի համար ճկուն հմտությունների դասընթացի կազմակերպում և անցկացում,

		-ԱՀ կառավարության ներկայացուցիչների համար (ցանկերը ենթակա են համաձայնության ԱՀ պետական նախարարի հետ) կառավարման հմտության դասընթացի կազմակերպում և անցկացում,
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար լրացուցիչ կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ մարմինների հետ	Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարություն՝ մասնավորապես «Անգլերեն լեզու խմբավարների համար» դասընթացի մասնակիցների հավաքագրման հարցում: Արցախի Հանրապետության Աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարություն՝ մասնավորապես մասնակիցների և գիտելիքների կարիքների ցանկի կազմման հարցում, Արցախի Հանրապետության պետական նախարարի գրասենյակ՝ ծրագրի բաղադրիչների համակարգման հարցում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	ՀԲԸՄ կողմից մշակված ծրագրի արդյունավետության գնահատման գործիքակազմի կիրառում: Ֆինանսական և նկարագրային հաշվետվություններ են ներկայացվում Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնական վարչությանը: ՀՀ կառավարության 2003 թ. հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԳԵՏ

Ս. ՊԱՊԻԿՅԱՆ